

10415

891.99

L-44

891.99

L-44

48

Յ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ԱՇԽԷՆ ^{ԵՒ} **ԱՐՄԵՆՈՒՀԻ**



ՍԱՌՍՈՒՐՆԵՐ ԿՈՂՄՍԵԱՆ ՍԱՀՄԱՆԻ

ՍԱՐԱԼԱՆՁԵՐԷՆ

(Առաջին Պրակ)

— Տրամա Մէկ Արարուած և Մէկ Պատկեր —



ՏՊԱՐԱՆ Ասպարէզի


Ֆրէզնօ, Բալ.

1915

8005

1005-501

Յ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ



ԽՕՄՔ ՄԸ

Հրատարակի Հանկուղ այս գրքուկը՝ եւ ոչ մէկ
ակնկալութիւն ու տխուրատուր հովեր չունիմ
մտքիս առջեւ բացի բուն նպատակին ծառայեցնելու
զայն՝ որուն օգնել կը բաղձամ իմ Համեստ միջոց-
ներովս: — Գրքուկին փոքրիկ ծախքերը հոգալէն
վերջ՝ զուտ Հասցեթը ամբողջովին պիտի յատկա-
ցընեմ Հայ Ազատագրութեան Համար կուուոյ Հայ
Գիւցազուններու:

Ողջո՛յն Մեծ Արշարայեօին:

Յ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

Ֆրեզնո, Յուլիս 4, 1915



2003



91110-42

136-2009



ԱՐՇԱՒՈՅՄԻ ԴՕՂԱՆՁՆԵՐ

Չ Ե . Ջ Ի

Չեզի՛, ձեզի՛ . . .

Որ կանացի Պատույն համար՝ անմըռունջ՝
Տառապանքի խաչն հանեցիք Գողգոթան . . .
Կամաւ Կռուի Դաւար իջաք առնուլ շունջ՝
Եւ կուրծքերնէդ վերք ըստացաք ի Վաքանն . . .
Փա՛նք Չեր վերքի արիւնին, —
Փա՛նք Չեր գէնքի շաչիւնին . . . :

* * *

Չեզի՛, ձեզի՛ . . .

Անյազք Կռուի ո՛վ դուք Անյազք Հերոսներ,
Որ խաչունեցաք ժըպիտը Չեր երեսին .
Անյայտ բողիք Չեր սրբանուն Շիրիմներ —
Որ մայրերուն արցունքն այնտեղ չը հոսին . . . :
Փա՛նք Չեր Կռուի Կրրկէսին —
Փա՛նք Չեր անյայտ Շիրիմին . . . :

* * *

Չեզի՛, Չեզի՛ . . .

Որ ուխտեցիք արքել արցունքն անլեզու,
Անարգուած Հայ մօթն ու քոյ աչերէն, —
Կեանքի գնով Հայ—Ապագան կերտելու
Մագգլցեցաք բարձրիկ լերանց լանջերէն . . .
Փա՛նք Չեր անկմա՛ն, վերելքի՛ն, —
Փա՛նք Չեր վաղուան վայելքի՛ն . . .

Չեզի՛, Չեզի՛ . . . * * *

Որ կը սուրբաք այժմ յազքական քայլերով,
Արեւայսի դողանջներով յարութեան
Գարնանաբեր Կարմիր-Կանաչ օրերով
Ազատ կեանքի լուրն անտել Հայութեան
Տեսնել յարգանք հաւաստիք, —
Տօնել Հայուն Հայրենի՛ք . . . :

Չեզի՛, Չեզի՛ . . . * * *

Ողջ-կենդանի ո՛վ Դիւցազունք Նոր—Մարտին,
Մերկ սուրերով Մեծ-Արեւայսն անդեցիք,
Ու փերեցի՛ք թիկունքն ու թևն նամարտին . . .
Եւ Նոր-Արեւմուր Հոգն-Հայրենի ներկեցի՛ք, —
Փա՛նք Չեզ ծնող Մայրերուն,
Փա՛նք Կաս-Կարմիր Օրերուն . . . :

Յրէզնօ. Ապրիլ 10, 1915



Վարդգոյրը դեռ չբացուած՝ մէկը կ'արտա-
սանէ այս ոտանաւորը :

ԱՇԽԷՆ ԵՒ ԱՐՄԵՆՈՒՀԻ

Մատուռներ կովկասեան Սահմանի Մարպանջերէն

*** Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ը ***

... Զմեռնային ստոնամանիք իրիկնամուտ է : Ահա որ ամպեր կուտակուած են անհուն երկնակամարին վրայ և բոլոր հորիզոններուն վրայ սաստիկ ձիւն կը տեղայ : Զիւնի ներմակ փաթիլներուն մէջ , սահմանեան սարպանջի մը վրայ՝ մագերն հովիւն ցան ու ցիր — կ'երևան երկու դեռատի կոյսեր , Աշխէն և Արմենուհի , — մին տասներկու իսկ միւսը հազիւ տասներօքը գարուններ բոլորելու : Ոտքերին բոպիկ , սրունքին մերկ ու ցուրտէն կարմրած , մարմիննին հին ցնցոտիներով հազիւ քէ ծածկուած : Մէկը միւսին ձեռքէն բռնած՝ քաշ կուտայ իր ետեւէն և համատարած ձիւնն ու ստոնամանիքը նեղ-փելու նիգեր կընեն — իրար օգնել կը ջանան : Յոգնած ու մահասարսուռ կերևին երկուքն ալ : Նօթուքենէ և սաստիկ ցուրտէն ուժասպառ... Բայց կը փախն տակաւին , ձիւնին ու փոթորիկին մէջէն սարպանջն ի վեր կը մագլցին , — Դէպի ո՞ւր... Երևի այդ իրենք ալ չգիտեն... : Դաժան քաղցի վերանաւեր Հայրենիքի , քանդուած Օնախի մարտոյ կայծեր , — դժբաղդ մնացորդներ՝ հովերէն իլուած , փոթորիկէն հալածուած՝ կը փախչին , մարդ-գագաններու նիրաններէն նուստ-րելու...



Վարագոյրը վեր բարձրացած միջոցին ԶԱՅՆ ՄԸ
— Ո՛վ Արշալոյս , ո՞ւր են քու ճառագայթում-
ներդ կենսանորոգ...

Խո՛ւլ գանգակի մը ձայնը կլուի հեռու ներէն...

ԱՐՄԵՆՈՒՀԻ

(Տարեց աւելի մեծ և եասակով աւելի ելկայն)

Շարժէ՛ , Աշխէ՛ն , ի՞նչ եղաւ քեզ . ինչո՞ւ կու-
լաս . ոտքե՞րդ սառեցան... Ա՛խ , խեղճ աղչիկ , այս
ի՞նչ օրի էր մենք ինկանք , ի՞նչ սև բաղդի տիրա-
ցանք :... Զիւն ու բուր է՛ սառնամանիք , անտուն ,
անտեղ , անՀայրենիք , կորուսած ենք մեր սիրելիք ,
անօթի , մե՛րկ կը թափառինք , քիչ կ'մնայ որ ցուր-
տէն սառինք... : Աստուած իմ , ո՞ւր երթանք ,
ի՞նչ ընենք , — չգիտենք : Ճամբայ ցոյց տուր , մեր
սև-դարձին , մեր սև-բաղդին սև-ճար ընենք...
— Ա՛խ , կորուսեա՛լ ենք , կորուսեալ... (Կուլայ) :

ԱՇԽԷՆ

Դաժան բաղդին դաժանաւեր զաւակներն ենք,
լքուա՛ծ, անյո՛յս զաւակներ...

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Բաղդին լքուած, կեանքէն լքուած, գութէ
զրկուա՛ծ զաւակնե՛ր...

ԱՇԽԷՆ

Ըսէ, Արմէն, Աստուած, երկինք, ա՞յս քան
անգութ են վերերն...

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Որ լքեցին մեր Հայրենիք, սուր ու աւեր տա-
րածեցին սիրուն վայրերն, որ խլեցին մեր սիրելիք
— և՛ մեր Հայրերն և՛ մեր Մայրերն...

ԱՇԽԷՆ

Դաժան սուրի, բորբոք հուրի մատնեցին: Եւ
մեր քոյրերն ու եղբայրներն գայլերու կեր դարձու-
ցին, թիւրքին ձեռքին թողուցին...

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Եւ մեզ սարերն ձգեցին, դազանի կեր դառնա-
լու, մեր սև վիշտը մոռնալու:

ԱՇԽԷՆ

Մոռնալո՞ւ...

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Ողբալո՞ւ...

ԱՇԽԷՆ

Ողբալու և լալու, այո՛ւ. — Կորուսեա՛լ ենք,
Կորուսեա՛լ... Ա՛խ, ստրերս սառեցան և կուրծքս
չա՛տ կը ցաւի...:

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Ո՛ւհ՛հ՛հ՛... Աշխէն, իմ կուրծքիս տակ փո-
թորի՛կ կայ, փոթորի՛կ, ձիւնե՛ր-փոթորիկ... Ա-
րիւնս ահա կը սառի... Բայց քալէ՛, քալէ՛, քալե-
լով մենք կը տաքնա՛նք միայն...

ԱՇԽԷՆ

Բայց ի՞մ կուրծքս՝ սառա՛ծ է. սառոյցին
տակ՝ ովկիանի պէս կ'ալէկոծուի՛, ուղեմոլոր,
գառն հովերէ փոթորկուած...

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Սուր դանակով շերտուա՛ծ...

ԱՇԽԷՆ

Դառն վիշտերով խոցոտուա՛ծ...:

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Շարժէ՛, Աշխէ՛ն, ո՛ւժ առ շարժէ, քիչ մը
մնաց, թերևս հի՛մա կը հասնինք... : Նայէ՛, նայէ՛
— Հէնց սա սարը որ կ'երևնայ մեր դիմաց, թերևս
անոր ետեւ ըլլայ Ռուսաստան... :

ԱՇԽԷՆ

Մեր Կովկասեան-Հայաստան... :

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Այո՛, այո՛, քայլէ՛, Աշխէն, մի վարանիր,
միշտ քայլէ՛... որ հասնինք :

ԱՇԽԷՆ

Մայրիկս, ա՛հ, մայրիկս... (Կուլայ) : Կոր-
սուեցաւ կամուրջէն վար, ձիւնին մէջ՝ իմ մայ-
րիկս... : Մայրի՛կ, Մայրի՛կ, ո՛հ, դժբաղդ մայր,
— դազան թիւրքին, դաժան թիւրքին դաժան ձեռ-
քովն խողխողած հայրիկիս մահն հերիք չէ՞ր քեզ :
Սուրէ՛ն, Սուրէ՛ն, սիրուն հրեշտակ, — գայլերն
ի՛նչպէս լափեցին քեզ, պատանեցին, յօշոտեցին
ու կերա՞ն... (Լաց կը լինի) :

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Մի՛ վարանիր, մի լար քո՛ յրեկ՝ կ'ըսեմ քեզի,
— գայլերն հի՛մա կուզան մեզ ալ կը փարատեն

թերևս... : Մութ է, մութ է՛, — անհուն խաւարն՝
գիշերն ահա վրայ կուտայ, մի՛ կենար : Մութին
մէջէն հազարաչեայ բազում գայլեր կը տեսնեմ,
ա՛հ... Հեռուէն կրակ ու բոց աչքերնին՝ վռհմակ
վռհմակ աստղերու պէս կը փայլին : Զիւնին վրայ
— գայլերն ահա՛ հեռո՛ւն... Հեռուն՝ շենանմա՛ս
ստուերի պէս կը սուբան, — մերկ յոշոտուած
դիակներու ման գալով... : Քայլէ՛, Աշխէն, մի՛
կենար, գուցէ զէպմեզ կը սուբան...

ԱՇԽԷՆ

Գայլեր՞ր...

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Այո՛, այո՛, կը լսե՞ս դիտ, — գայլերն ահա՛
ձիւնին վրայ՝ սե՛պ — սեպագետս գետերու պէս կը
նշմարտին իմ աչքիս... :

ԱՇԽԷՆ

Արմէ՛ն, Արմէ՛ն, — Գայլերն թող գնան մեզ
փարատեն, այդ հող չէ՛... Մեզ վիշտերէ, տա-
տապանքէ կ'ազատեն, — այնպէս չէ՞... : Բայց
չիտակը խօսէ, թիւրքե՞րը ըսել կ'ուզես... :

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Ի՞նչ կը խօսիս, ինչե՞ր կ'ըսես, Հա՛յ աղջիկ, —
գայլերն ուրիշ են՝ թիւրքերը ուրիշ : Գայլ ըսել
կ'ուզեմ, — հասկցա՞ր :

ԱՇԽԷՆ

Ա՛խ, չէ՛ Արմէն, — չէ՞ որ գայլերն ալ օգնեցին զազան թիւրքին, մայրս ու եղբայրս կերան...

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Իսկ թիւրքե՞րը...

ԱՇԽԷՆ

Անգու՛թ թիւրքեր, միշտ անողորմ զազաններ, — անոնք ալ հայրս կերան... : — Ա՛խ, ես ինչո՞ւ կ'ապրիմ... : Հայրի՛կ, մայրի՛կ, օ՛հ չ՛հ չ՛հ... (Կը նուազի և ուժասպառ կ'իյնայ ձեռքը մէջ) :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Մաքո՛ւր, հարազատ երկիր՝ գիակներով ծածկուած : Սրբավայր Հայրենիք՝ մարդ-զազաններու ստից կոխան... : — Դժբաղդ Աշխէն, ս՞ի չզգար քեզի պէս : Խեղճ աղջիկ, մէկը փնայ՞ որ տառապանքի Խաչը չկրեց իր ուսէն վար՝ իր կուրծքին վրայ... : Ա՛խ, բայց դուն ինկա՞ր... : (Ծուկկի կուգայ անոր բով) : Աշխէ՛ն, Աշխէ՛ն... — Զայն չկայ : Աստուա՛ծ իմ, մեռա՞ւ... : (Շուարած ու անլի այլայլուած) : Օ՛... օգնութի՛ւն, օգնութի՛ւն, Աստուած, սուրբեր, մարգարէներ, օգնութեան հասէք մեզ, և Զեր պահպան հրեշտակը — թաջն Անդրանիկը խրկեցէք մեզ օգնութեան... : Հիմա գայլ-զազանի կեր կը դառնանք երկուքնիրս

ալ : Ազատէ զմեզ Տէ՛ր, այս անտանելի վիճակէս : (Զինով կը շփե Աշխէնին նակատը) : Արթնցի՛ր, Աշխէ՛ն, մի՛նակ մի՛ թողուր զիս... (Ուռի կը կենայ և ամբողջ ուժը հաւաքելով՝ վեր կը բարձրացնէ Աշխէնին) : Աշքո՛ւ բայ, Աշխէ՛ն, ճամբայ ունի՞նք դեռ : (Կուլայ և մէկ ձեռքով իր մազերը կը փետտէ կակիծով) :

ԱՇԽԷՆ

(Ուռի գալով) : Մա՛յ... րի՛... կը՛ս... :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Ու՛ժ առ, հոգի ե՛կ, աղջիկ — չէ՞ որ իմ մայրիկս ալ... (Կը հեկեկայ բարձրաձայն) :

ԱՇԽԷՆ

(Քջիկ մը անլի ուռի գալով և նուազկոտ ձայնով) : Քո՞ւ մայրիկդ... Արմենուհի, մի՛թէ՞... Բայց ի՞նչ եղաւ քու մայրիկդ :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

(Լալագին ձայնով մը) : Իմ մայրիկս, Աշխէ՛ն, Գոմաձորի (*) մօտ՝ Արաքսի կամուրջէն անցած միջոցին, աջ ձեռքով 3 ամսական փոքրիկ եղբայրս Գուրգէնը գրկած, իսկ ձախ ձեռքով ալ՝ Գուրգէնին հագուստեղէնք ծրարն էր գրկած...

(*) Գոմաձոր գուտ հայաբնակ գիւղ մըն է, Բասէնի մէջ՝ Կովկասէն դէպի Կարին տանող նամբուն վրայ :

ԱՇԽԷՆ

Վա՛յ, վա՛յ...

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Եւ կը քալէինք Արաքսի կամուրջէն անցնելու
Համար, բայց երբ կամուրջին ճիշդ կեղբոն տեղը
Հասանք, մայրս խորհեցաւ...

ԱՇԽԷՆ

Ի՛նչ սեղաբոյ, ինչ մեծ ցա՛ւ...

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Այո, մայրս խորհեցաւ ձեռքին ծրարը նետել,
— որովհետեւ, դիտե՞ս, Աշխէն, (Երկուքն ալ կրս-
կսին հեկեկալ պահիկ մը) մայրս շատ յոգնած էր:
Եւ նետեց ծրարը կամուրջէն վար — գէպի խո՛ր
անդունդը...

ԱՇԽԷՆ

Ա՛խ, այդ անդունդը, այդ խո՛ր — անդուն-
դը... և...

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Եւ մայրս յանկարծ... յանկարծ՝ տեսաւ որ...
որ փոքրիկն էր իր նետածը...

ԱՇԽԷՆ

Գուրգէ՞նը...

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Այո՛, Գուրգէնը, փոքրիկ եղբայրս, մեռաւ...
(Կուլայ): Գլխուն վրայ ինկաւ և սառոյցին զար-
նուելով ջախ... ջախուեցա՛ւ... Օ՛. այդ անկիծ-
եալ՝ խոր անդունդին մէջ, այս կուրանալիք զոյգ
աչքերով՝ Հարազատ ու մէկ-Հաստիկ եղբորս ջախ-
ջախուելը տեսայ ես, Աշխէն...

ԱՇԽԷՆ

Կուրանայի՛ր ու չտեսնայիր, — դառն կսկիծ
է, դառն կսկիծ, Արմէն...

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Կուրանայի՛ր ու չտեսնէի՛. դեռ աւելին կայ,
Աշխէն, ցաւին վերջը, կսկիծին ծայրն չեկաւ դեռ:

ԱՇԽԷՆ

Ապա՛ մա՞յրդ. անբաղդ մայրդ ինչպէ՛ս ե-
ղաւ անկէ վերջ:

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Մայրս, ... օ՛հ... մայրս. (Հաց կը լինի
նորէն): Մայրս ցաւն ու կսկիծէն խելագար՝ իր
մազերը ուժգին կերպով փետտելէն — ինքզինքը
կամուրջէն վար նետեց... Ա՛խ, Գուրգէնին քովը
գնաց... խելակորոյս ու անհամբեր եղբորս փրկել
փութաց չոն: Խե՛ղճ մայր, այդպէս կարծեց մի
գուցէ...

ԱՇԽԷՆ

Դուքն ի՞նչ ըրիր և ի՞նչ եղար այդ պահուն,
բոյր իմ Արմէն :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Յնորական պահիկ մը, ցաւին սուղև անհամ-
բեր՝ աստ ու անդ վազեցի այծեամի պէս ցաթկե-
լէն : Պահ մը վերջն ալ կէս խելագար՝ մօրս մահ-
ուան տեսիլքէն՝ մագերս ուժգին փետտելէն դուժ-
կանի պէս փախչեցայ, աչքիս հաւատք չտալով,
անէծք ու փա՛յ կանչելով . . .

ԱՇԽԷՆ

Ճամբադ ո՞ւր տարաւ քեզ, խեղճ Արմենուհի :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Ճամբայ ըսուած չկար որ. ձիւնի մէջէն փախ-
չելով, միշտ իյնալով ելնալով, քրտնաթաթախ ու
չնչասպառ սմէն զի կը փախչէի, մէյ մ'ալ տեսայ
հեռուէն՝ մէկը դանդաղ քայլերով՝ բլուրն ի վեր
դէպ ինձ կուգար — տեսայ որ՝ դո՛ւն ես, Աշխէն,
հանդիպեցանք իրարու, ցնցումով ու սոսկումով
իրարու գիրկը ինկանք . . .

ԱՇԽԷՆ

Հայ բլրալնիս յայտնեցինք, վերջ անուննիս
խօսեցանք : — Այնպէս չէ՞ :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Կսկիծնիս նոյն կարծեցինք, լոկ փախչելնիս
խորհեցանք : Այդպէս է՛ :

ԱՇԽԷՆ

Բայց ի՞նչ եղաւ հայրդ, Արմէն, չպատմեցիր
դեռ սմէն :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Մեր մեկնելէն շարաթ մ'առաջ, իմ Աշխէն, —
հայրս Կարնոյ մէջ կախազան բարձրացուցին վատ
թիւրքեր . . .

ԱՇԽԷՆ

(Ամբողջ ուժովը գրկելով իր ընկերուհին)
Բազդակից ենք, Արմենուհի, բազդակի՛ց . . . (Եւ
կուլան երկուքը մէկէն գրկախառն) :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Սե՛ր բազդ, սե-ճակատադիր, ճերմակ օրերով
ձիւն ու բուքի մէջ . . . Եւ աւե՛ր — աւեր Հայրե-
նիք . . . :

ԱՇԽԷՆ

Շատ քնա՞ց որ հանինք, Արմենուհի, այժմ
դուն այդ ըտէ :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Այս ճամբուն վերջ մը կայ անշուշտ, միայն
ուժերնիս ամփոփենք ու քալե՛նք . . .

ԱՇԽԷՆ

Գիշերը՝ . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Մութ գիշերին կը յաջորդէ շուտով պայծառ
Արշարայսը . . . Բարե՛նք :

ԱՇԽԷՆ

Գայլե՛րը . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Հրացաններու բազում ձայներ ու որոտներ կը
լսուին ահա , և գայլերն ամէնքը կորսուեցան . . .
մութին մէջ :

ԱՇԽԷՆ

Մայրս , եղբայրիկս , ա՛խ . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Մայրս , եղբայրիկս , ա՛խ . . .

ԱՇԽԷՆ

Հա՛յրս : — Անօթի գայլե՛ր . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Հա՛յրս : — Գազա՛ն թիւրքեր . . .

ԱՇԽԷՆ

Անօթի՛ Էմ . . . :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Սո՛ւր . . . Խօսելու ձայներ կը լսեմ մութին
մէջ :

ԱՇԽԷՆ

(Սարգսիսահար և այլայլուն) Ո՛ղբե՛ր Էն . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Կեցի՛ր , աղանջե՛նք : (Երկուքը միասին ձեռ-
քերնին աղանջումն՝ ձայներուն կողմը կ'երկարին
և ուտողիք հայեացքով մը մտիկ կ'ընեն) :

ԱՇԽԷՆ

Հայերէն կը խօսին . Հայեր ըլլալու Էն . . . :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Քաջն Անդրանիկի երգը կ'երգեն . կը լսե՞ս ,
Աշխէն :

ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԳՈՒՆԴ ՄԸ

(Հեռուէն բազում ձայներով կ'երգեն խմբովին .)

« Իրբե Արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ ,
Թնդացնում ես երկինք , գիտենք տենչավառ . . .
Վեհ անունդ պիտի յիշուի դարէ դար , —
Հայոց լեռներ քեզ ապաստան , Անդրանիկ :
— Հայրենիքի տէր ու պաշտպան , Անդրանիկ : »

ԱՇԽԷՆ

Կռուող Հայ Փէտայիներու բանակն է . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Անունդ սիրեմ , Անդրանի՛կ . . .

ԱՇԽԷՆ

«Տէր ու պաշտպան» կ'երգէի՛ն . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Հոգուտ զուրպան , Անդրանի՛կ . . .

ԱՇԽԷՆ

Աչքդ սիրեմ , Անդրանի՛կ . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

«Իբրև Արծիւ սաւառնում ես լիս ու ժա՛րս

ԱՇԽԷՆ

Եւ մուրազդ թող չմնայ անկատար . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Մութին մէջէն վե՛ր սաւառնող Արծիւն ես . .

ԱՇԽԷՆ

Մութին մէջէն լոյս աւետող Դիւցազն ես . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Հայ կոյսերու քաջ պահպան Հրեշտա՞կ . . .

ԱՇԽԷՆ

Գողթան Կոյսերն պիտի Հիւսեն քեզ պսա՛կ . . .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Հայաստան երբ ողջունէ իր յաղթանակ :

ԱՇԽԷՆ

Մտռո՞ի գողթէն ծագի մեզի Նոր-Արե՛կ .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Եւ ողջ աշխարհ Յաղթանակիդ տայ բարե՛կ . . .

ԱՇԽԷՆ

Արեկ սիրեմ , երկար-արև Անդրանի՛կ :

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Քեզ կ'ըստասէ Հայուն թշուառ Հայրենիք :

ԱՇԽԷՆ

Եւ մենք , ե՛ւ մե՛նք , ազատուելու կ'ըստասենք .

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Ուզեկորոյս , այսպէս մտլոր որ Հոս ենք :

ԱՇԽԷՆ

Պօռա՞նք, կանչե՞նք.

ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

Կանչենք և՛ աղաչե՛նք:

ԱՇԽԷՆ և ԱՐՄԵՆՈՒ ՀԻ

(Միասին) Օգնութի՛ւն, օգնութի՛ւն... Հայ ենք մենք, — Ազատարար-Հրեշտակնե՛ր... Հայ աղջիկ ենք, ուղեկորոյս ու յոյնարեկ՝ Ձեզ կ'ըստպասենք: Հասէք, օգնութեան հասէ՛ք, փրկեցէք, ազատեցէք մեզ անողորմ թիւրքին սարսափէն... մահէն ու տանջանքէն:

ՉԱՅՆԵՐ ՀԵՌՈՒԻՆ —

Եկա՛նք, Եկա՛նք, — մի՛ վհատիք, անմեղ հրեշտակներ... .


(ԱՇԽԷՆ և ԱՐՄԵՆՈՒ ՀԻ՝ ուրախութեան նիշեր արձակելով ձայներուն կողմը կը վազեն որ ատեն հեռուէն ուրիշ ռազմերգի մը ձայնը կը լսուի նորէն) .

ԽՈՒՄԲԸ կ'երգէ .—


«...Փառք ժողովուրդին, ատա՛ւ է գնդակ:»

* * * Վարագոյր * * *

— 000 —



Վարագոյրը գոցուելէն յետոյ՝ մէկը կ'արտասանէ այս ոտանաւորը:



«ԱՐՇԱՒՈՅՍԻ ՂՕՂԱՆՋՆԵՐ» ԷՍ

ԸՐԻ ԻՆՈՏ ԳԻՇ ԵՐԸ . . . [*]

(Խաւարէն ի լոյս...)



Խաւարեցան արեգակը և լուսին
Թանձր աղջամուղջ քջապատեց Հայաստան,
Սիրատուն ծնողք, գաւկունք իրար կորուսին,
Անգութ սուրին գոհարեցում Հայաստան:

Հայորդիներ քաղում ի խոր լըուսիւն,
Իսպառ մոռցան հին օրերու յիշատակ,
Ու գագեցին խոցում սրտից բարախիւն —
Ըմբոստացման ոչ մէկ նիգի ընդունակ...

(*) Այս ոտանաւորը գրուած է 1908 թ. Օգոստոսին և հրատարակուած է նոյն տարուան թիւ 6 Ասպարէզի մէջ:

300

10415

Դարե՛ր անցան, մութն Հայ-Աշխարհի բևաճ էր,
Ոչ ոք եկաւ արբարայտի բերել լուր -
Երկինք անգամ մըտիկ չըբաւ, լըսած էր,
Անմեղ Կոյսին աղօթքներուն տխրարոյր . . .

Բայց չեմ յիշեր, տեսի՞լ մըն էր թէ երազ,
Աւերակաց հրդեհներու բոցի լոյս՝
Խոր ֆունին մէջ անոնց «հանգիստ»ն հանապազ՝
Վրդովեց որ, ստփի ելան — բայց անյա՛յս . . .

Մէկդի բողած խունկ-աղօթքի մատուցում,
Եւ դիմելով խաւարի մեծ իշխանին,
Հայ դարաւոր գրկանքներուն հատուցում
Պահանջեցին, ըսպառնալով իր կեանքին :

. . Արբարայտն էր . փարատեցան թանձր բոտերք՝
Հայ գուսանին մահահրաւէր երգին ձայն,
Արիւնաներկ Վանայ լին վեհ եզերք
Մարտի կոչեց հայոց փայերն ամենայն :

Դեռ մարտնչի՛ն Հայդուկները հրաբորբոք՝
Ազատ-անվախ իջած կռուի ասպարէզ,
Մինչ Նոր-Արեւն կ'ոսկեգօծէ վաղօրօք
Վանայ լին ալիքները փրփրաղէզ . . .



ՀՄԿԻՉ

ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ

ՄԵՔԵՆԱՆԵՐ

Նորմատիվ ակտերի ժողովածու

1913

